



Խմբագրական

Ռամկավարութիւնը՝ ժողովուրդին Խղճին Չայնն Է

Մեր գաղափարախօսութիւնը՝ Ռամկավար Ազատական գաղափարախօսութիւնը, որեւէ ժողովուրդի խղճին ձայնն է: Անիկա իր մէջ անդեղուած ունի՝ հաւատքի՝ կամեցողութեան՝ հօրօք ոյժ մը եւ այդ ոյժին մէջ կը գոյանայ մարդկային արժանապատուութեամբ ապրելու՝ կեանքին ճշմարիտ իմաստը, որ կը բխի ժողովրդական ամէնօրեայ կեանքին պահանջներէն, ինչպէս աշխատանք՝ հանապազօրեայ հաց, ընկերային ապահովութիւն, բժշկական խնամատարական ապա-հովութիւն եւ ինչ որ կենսական է, մարդ արարածին՝ կեանքը ապրելու համար:

Իշխանութեան մը կողմէ՝ անտեսել ժողովրդական իրաւունքները ոտնակոխ ընել ամենատարրական պահանջները գրկել ժողովուրդը ապրելու արտայայտելու՝ ստեղծագործելու ամենադոյզն իր մարդկային իրաւունքներէն, այդ կը նշանակէ գրկել քաղաքացին իր ապրելու՝ գործելու արտայայտուելու իր նախնական իրաւունքներէն, այսինքն երկրին մէջ հաստատել, բնատիրական իշխանութիւն, որ կը փորձէ ինքզինքը պարտադրել՝ ժողովուրդը ստեղծելու մատնելով, իր ազատութիւնները արգիլելով եւ խլելով իրմէ իր խիղճին ձայնը եւ թանկագին մարդկային արժանապատուութիւնը:

Մարդկային իրաւունքներու պատմութիւնը շատ հին է: Երբ մարդ արարածը կարողացաւ գիրերը յօրինել, գիրերու յօրինման հետ արձանագրեց նաեւ մարդկային կեանքի օրէնքները եւ իրաւունքները, այս կը հաստատէ Քրիստոսէ մօտաւորապէս չորս հազար տարիներ առաջ, Սումերական պնակիտներու արձանագրութիւնները, որմէ ետք աւելի ուշ «Համաւորապի» պէտք է օգտագործած ըլլայ Սումերական-Աքքատական գոյութիւն ունեցող օրինագիրքերը, որոնցմէ օգտուելով՝ ան պատրաստեց իր 282 համար կրող օրինագիրքը:

Շարունակութիւնը էջ 2

ՄԱՐՏԱՐԱՊՈՍ

Մարտարապարտը՝ որուն շնորհիւ ստեղծուեցաւ, Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը անկախութիւնը, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ սրբազան յաղթանակ մըն է, որ մկրտուած է, համայն հայ ժողովուրդի գոհաբերութեամբ եւ օրինուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ բոլոր Հայաստան աշխարհի եկեղեցիներու զանգերուն աղօթքներու ղօղանջներով եւ դրոշմուած է՝ համայն հայ ժողովուրդի նահատակութեամբ:

Հեռու մնանք Մարտարապատեան Ազգային Սրբաղծութենէ եւ չարատաւորենք Մեր Նահատակաց Սրբազան Յիշատակը որոնք կերտեցին Ազատ Անկախ Հայաստանը, 28 Մայիս 1918ին:

Նոր Աշխարհի Արխիւէն 1990

ՄԱՐՏԱՐԱՊՈՍԻ ՈԳԻՈՎ

Մարտարապատի դիցազնամարտը, հայ ժողովուրդի նոր օրերու գոյամարտն է ընդդէմ դարաւոր ստրկութեան, մեր մշակոյթի հարստահարման եւ մեր 5000 տարուայ հայրենական հողերու կեղեքման:

Մարտարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտներուն՝ հայ ժողովրդի դրսեւորած դիցազնական ոգին, իր գոյատեւելու վճռակամութիւնն էր, որ արտացոլուեցաւ հայ ժողովուրդի միասնական սխրագործութիւններով եւ քաջագործութիւններով:

Հրէշային հայոց ցեղասպանութենէն եւ արեւմտեան Հայաստանի հողերու բռնագրաւումէն ետք, հայ ժողովուրդը բնաջնջելու ծրագիրը կը շարունակուէր մնալ: Այդ փոքր Արեւելահայաստանն ալ արեան բաղնիքներու վերածելով վերջ դնել հայկական հարցին եւ ճամբան հարթել համաթուրանական երազի իրականացման:

Շարունակութիւնը էջ 2



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներքաղաքական ճգնաժամի կարգավորման մասին

\*Հայրենական սահմանների հետագա անձեռնմխելիությունը երաշխավորված տեսնելու նախանձախնդրությամբ,

\*Երկրի տնտեսական կացության հետագա վատթարացումը կանխելու մտահոգությամբ,

\*Համայն հայությանը Հայաստան, Արցախ եւ Սփյուռք, համախմբելու ձգտումով.

Ռամկավար Ազատական կուսակցությունը, իր հայաստանյան եւ սփյուռքյան կառույցների համախոհությամբ կոչ է անում՝

Առաջիկա մայիսի 1-ին ՀՀ Ազգային ժողովի նիստում Նիկոլ Փաշինյանին ընտրել հանրապետության վարչապետի պաշտոնում եւ նրան պարտականություն տալ, Սահմանադրության համաձայն, ձեռնամուխ լինել ժամանակավոր նոր կառավարության կազմությանը պետական կառույցների աշխատանքը անխափան շարունակելու առաջադրանքով:

Ռամկավար Ազատական կուսակցությունը կոչ է անում Նիկոլ Փաշինյանին՝

ա) Գործել միմիայն Սահմանադրության եւ օրէքների շրջանակներում եւ վեր չդասվել օրէքից ինչ էլ որ լինեն իրեն շրջապատող զանգվածների պահանջները,

բ) Սահմանադրությամբ նախատեսվող բոլոր պարագաներում սերտորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության նախագահի, Արցախի Հանրապետության նախագահի, իսկ ազգային-համահայկական կարեւորագույն հարցերում նաեւ Ամենայն հայոց հայրապետի հետ:

գ) Օրենսդրական համապատասխան գործիքների կիրառմամբ ձեռնարկել Ազգային ժողովի ցրման գործընթաց եւ Հանրապետության նախագահին առաջարկել նշանակել արտահերթ ընտրություններ:

Շարունակութիւնը էջ 4

Հիասթափեցնող մտորումներ Միություն, պայքար, հաղթանակ...

Գրավիչ, հուզիչ եւ խոստումնալից կարգախոս:

Բավական գորավոր եւ կայուն երկիր դարձած պետքէ լինէինք, եթէ գէթ այս կարգախոսն արտաբերող հասարակության մեկ մասը հետներ դրան՝ մեկ կողմ դնելով անձնական, կուսակցական, կրօնական կամ որեւէ այլ պատկանելություն՝ առաջնային դասելով ազգային ու պետական շահը:

Օրեր առաջ Ատոտիկէի մարզպետարանի հրավերով իբրև Հունահայոց Թեմի Առաջնորդական տեղապահ ներկա գտնվեցի մարզպետարանի եւ Հունաստանի Հայ Դատի հանձնախմբի կազմակերպած Հայոց Ցեղասպանության 103-րդ տարելիցի կենտրոնական ձեռնարկին: Ի տարբերություն մարզպետարանի կազմակերպած այլ ձեռնարկների, հասկանալի պատճառներով, այստեղ արարողակարգային մասը հանձնված էր մեր շատ սիրելի հայրենակիցներին (Հունաստանի Հայ դատի հանձնխմբին) հայկական կառույցների ներկայացուցիչներին ներկայացնելու կամ իրենց տեղերը ցույց տալու համար:

Շարունակութիւնը էջ 4

Շարունակում է 1-ին

### ՄԱՐՏԱՐԱԿԱՆ ՈԳԻՈՎ

1915-ին հազիւ երեք տարիներ ետք, երբ հայ ժողովուրդի խլեակները անկարող, անզէն եւ հոգեկան անսահման յուսալքութեան, հասած, անգամ մը եւս կը գտնուին մահու եւ կենաց ճգնաժամային վիճակի մէջ, ահաւասիկ 22 Մայիս 1918ի առաւօտեան, վերապրումի, միասնականութեան, ազատութեան եւ հերոսութեան զանգերը դողանջեցին: Սուրբ Էջմիածնի զանգերուն կ'արձագանգէն ամբողջ Հայաստանի զանգերը. Արարատեան դաշտը կը վերածուի համաժողովրդական ուխտավայրի. հայ ժողովուրդն էր, որ իր բոլոր խաւերով ու հատուածներով անխտիր եկած էր իր արեան պարտականութիւնը կատարելու, եւ յաղթանակի ու լինելութեան կոթողը բարձրացնելու հայ ժողովուրդի սրտին՝ Արարատեան դաշտին վրայ:

Հայաստանի պետականութեան հռչակումը 28 Մայիս 1918ին՝ հինգ հարիւր տարուայ գերութենէն ետք, ժամանակակից հայոց նոր պատմութեան նոր էջ մը բացաւ. եւ Մարտարապատի դիւցազնամարտը ամէն մէկ հայու հոգիին մէջ վերականգնեց գոյատեւելու անխորտակելի կամքը եւ մեծ երազի մտաւոր հաւատը:

Մարտարապատի տօնը՝ սրբազան պայքարի ուխտաւորութեան տօնն է, հայոց սրբազան անկորնչելի հողերու պահանջատիրութեան տօնն է, Հայաստան լեռնաշխարհի մեծ քարտէսի իրագործումներու տօնն է, միսնականութեան մեծ ոյժի տօնն է, յաղթանակի տօնն է, եւ վերջապէս ազգային տօներու տօնն է, ուր հայ ժողովուրդը իր արեան գրիչով կնքեց յաւերժութեան վկայագիրը:

Մարտարապատի ճակատամարտէն ետք, ամէն օր հայ ժողովուրդը՝ գոյատեւման նոր Մարտարապատի ճակատամարտը մը մղեց եւ կը մղէ մինչեւ այսօր սփիւռքի տարածքին եւ կամ Հայաստան աշխարհի մէջ:

Փրկարար գոյամարտը այս օրերուս դժուարին պայմաններով կը շարունակուի, ըլլալ այդ խաղաղ օրերուն եւ կամ փոթորկոտ մտահոգիչ օրերուն, եւ մանաւանդ երբ մեր դարաւոր թշնամին այսօր ինքզինք կը համարէ ոչ թէ միայն միջին արեւելքի զինուորական ամէնէն հզօր ոյժը, այլ ամբողջ Եւրոպայի ցամաքամասին վրայ:

Հայրենիքը եւ հայ ժողովուրդը կը գտնուին քաղաքական, տնտեսական եւ ընկերային դժուարին վիճակի մէջ. իր առջեւ հարիւրաւոր անլուծելի մնացած խնդիրներ կան, եւ այս բոլորին վրայ աւելցնենք Արցախի պահանջատիրութիւնը, պաշարումը, Ատրպէյճանէն Հայաստան ներգաղթած հազարաւոր հայերը, Հայաստանի մէջ աւելի քան կէս միլիոն հայերու անօթեւան վիճակը, ինչպէս նաեւ երկրաշարժի աղէտը: Փոքր երկիր մը, մարդկային, տնտեսական եւ նիւթական սահմանափակ եւ տկար կարողութիւններով, ինչպէ՛ս կրնար յաղթահարել այս դժուարութիւնները:

Հայ ժողովուրդը ամենուրեք այդ դժուարին օրերուն պէտք ունի հերոսական Մարտարապատի փրկարար ու փառապանծ ոգիին, այդ դիւցազնական ոգին որ 1918 Մայիսեան օրերուն դիմագրաւեց եւ տիրացաւ կենաց բաժակին՝ ապրելու եւ գոյատեւելու իրաւունքին եւ ապահովեց ազատութեան եւ ազգային պետութեան դարաւոր երազը:

Մենք այսօր պէտք ունինք Մարտարապատի ոգիէն բխած ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, մաքուր եւ անկեղծ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ, մեր ժողովուրդին դէմ սպառնացող վտանգներու դիմագրաւելու ՔԱԶՈՒԹԻՒՆ, ՀԱՍՏԱՍԿԱՍՈՒԹԻՒՆ եւ ԼԱՅՆԱՌՆՈՂՈՒԹԻՒՆ, վեր դասելո՞ւ հայրենիքը, անոր անվտանգութիւնը եւ գոյատեւումը ամէն տեսակի անձնական եւ հատուածական շահերէ: Թող ներշնչուինք անցեալի դիւցազնական վեհութիւններէն, որպէսզի հայրենիքը այս դառն բաժակն ալ անցընէ:

Փառք ու պատիւ Մարտարապատի յաղթանակը կերտող բոլոր հայ ժողովուրդին, եւ յաւերժ խունկ եւ աղօթք Մայիսեան հերոսներուն, որոնց արեան գնով կերտուեցաւ հայ ժողովուրդի վերածնունդը, ազատ ու անկախ ապրելու եւ գոյատեւելու իրաւունքը:

Շարունակում է 1-ին

### Ռամկավարութիւնը՝

Համնուրապի իր օրինագիրքի յառաջաբանին մէջ կը գրէ,

«Արդարութիւն տարածելը ուղեցոյց է, ոճրագործները եւ չարերը ջարդելը եւ կործանելը նպատակն է»:

Համնուրապի իր օրինագիրքի վերջաբանը հետեւեալ խօսքերով կ'աւարտէ,

«Յաջողեցայ երկրիս մէջ բարօրութիւն հաստատել եւ կրցայ ժողովուրդիս պիտանի տուններ ապահովել եւ հարուածեցի ամէն ձեռք որ կը փորձէր փտածութիւն՝ ապականութիւն եւ կաշառակերութիւն սփռել ժողովուրդին մէջ»:

Ներկայիս ամբողջ աշխարհի մէջ՝ որեւէ երկրի մէջ գոյութիւն չունի, բացարձակ ռամկավարական, ժողովրդական, ազատական՝ հասարակական կեանք, այլ գոյութիւն ունի՝ պայմանական յարաբերական ժողովրդավարութիւն՝ ռամկավարութիւն Democracy:

Մեր սառնապէտ ժողովուրդը, հազիւ իր անկախութիւնը գտաւ, այդ անկախութեան հետ ունեցաւ նաեւ՝ Արցախի ազատագրման պայքարը եւ երկրաշարժի կործանիչ աւերը:

Հայ ժողովուրդը՝ փոխանակ այդ եղելութիւններուն դէմ պայքարի եւ յաղթահարէ, ահաւասիկ մէջտեղ եկաւ, պետական՝ այսինքն ընդհանուր ժողովուրդին պատկանող՝ պետական հարստութիւնները յափշտակելու՝ կողոպտելու պարագան եւ այդ բոլորը պատահեցաւ՝ պետական բարձրաստիճան պատասխանատուներու կողմէ:

Այդ օրէն սկսաւ՝ հայ ժողովուրդին թշուառութիւնը եւ տարիներու ընթացքին ստեղծուեցաւ, անապահովութեան բռնատիրական վիճակ մը եւ մեր չքնաղ հայրենիքը՝ հայրենի ժողովուրդին համար՝ կորսնցուց՝ հոն ապրելու իր իմաստը եւ սկսաւ աւերը, որ կը կոչուի արտագաղթ:

Լեւոն Տէր Պետրոսեանի նախագահութեան շրջանին փորձ մը կատարուեցաւ, որպէսզի հայ քաղաքացին եւ մանաւանդ գիւղացին հայրենի հողերուն կապուած մնայ եւ այդ պատճառաւ հայրենի հողերը վերադաձուեցան իրենց տերերուն՝ գիւղացիներուն: Սակայն որովհետեւ, հողը հերկելու եւ բերք հասցնելու օժանդակութիւնը չունեցաւ, անտեսուած ու բարոյալքուած, լքեց իր տունը՝ գիւղը եւ իր հողը եւ տարագրութեան ցուպը ձեռքը առաւ եւ դիմեց օտար անձանօթ եւ դժուարին հորիզոններ, որպէսզի կարենայ կտոր մը հաց հայթայթէ, իր ընտանիքի անդամներուն հոգիի հատորներուն:

Գիւղը՝ գիւղացին եւ հողը, կը մնան որեւէ երկրի մը՝ յառաջդիմութեան՝ բարգաւաճման կենարար եւ ստեղծագործ սիրտը: Գիւղն է որ, քաղաքին կը հայթայթէ՝ ինչ որ կենսական է՝ այսինքն ամէնօրեայ պէտքերը: Երբ գիւղ կ'ըսենք, կը հասկնանք հայրենի հող՝ եւ հողը հիմնական առաջին եւ վերջին ազդակն է՝ ազգի մը գոյութեան եւ գոյատեւման:

Հայը պէտք է՝ իր հայրենի հողին՝ հայրենիքին կապել: Այդ կրնայ պատահիլ միայն, ժողովուրդին ապահովելով արդարութիւն, հաց, աշխատանք, մարդկային եւ ազգային արժանապատուութիւն:

Այս բոլորը կրնայ պատահիլ՝ միայն ժողովրդական ռամկավարական կարգերու եւ օրէնքներու հաստատմամբ:

Ուստի պէտք է ռամկավարական գաղափարախօսութիւնը, հայրենի դպրոցներէն ներս դասաւանդուին, պէտք է քաղաքացիական դաստիարակութեան նիւթ դառնայ եւ մաս կազմէ այդ ուսումնական ծրագրին մէջ, ինչպէս ուրիշ նիւթեր, որպէսզի հայրենի քաղաքացին իմանայ իր պատրականութիւնները եւ գիտնայ պաշտպանել նաեւ իր մարդկային իրաւունքները, որովհետեւ ռամկավարութիւն կը նշանակէ, արդարութիւն, հաւասարութիւն, հաւատարմութիւն, աշխատանք, նուիրում եւ ծառայութիւն, որովհետեւ ռամկավարութիւնը կը մարմնաւորէ՝ Ժողովուրդի Խղճին Չայնը:



### Եվս մեկ հայրենասիրական քայլ

Ժամանակները փոխվում են, փոխվում է նաև Արցախի Քաջաթաղի շրջանի Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսումնական միջավայրը: Ասում են լավ սկիզբը գործի կեսն է, իսկ մեր գործում լավ ու ազգանվեր սկիզբը դրվել է տարիներ առաջ: Բերձորի դպրոցում այժմ սովորում է շուրջ 200 աշակերտ, որոնք արդեն հնարավորություն ունեն ուսանել վերանորոգված չորրորդ դասարանում, այն կրում է Մարգիս Հացպանյանի անունը: Դասարանի վերանորոգումը հովանավորել է Արշակ Չոպանյան ինստիտուտը (Փարիզ):



Նորոգված դասասենյակի բացման և անվանակոչության արարողությանը տեղի ունեցավ ապրիլի 21-ին: Միջոցառմանը ներկա էին Փարիզում գործող «Արշակ Չոպանյան» ինստիտուտի տնօրեն Վարուժան Միրապյանը, ԱՄՆ և Կանադայի ԹՄՄ ներկայացուցիչ Գայանե Մուրադյանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, Քաջաթաղի շրջանային վարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ և աշակերտներ:

Հնորհակալություն հայտնելով շնորհակալագրի համար՝ նկատեց, որ իրենց միության համար կարևոր է հայ մանուկների և երիտասարդների կրթությունը, Չոպանյան ինստիտուտը աջակցել և շարունակելու է աջակցել հայրենանվեր այսպիսի ձեռնարկների իրականացմանը:

9-րդ և 10-րդ դասարանների աշակերտները բովանդակալից ներկայացրին Մարգիս Հացպանյանի կենսագրությունը, ակնածանքով փաստեցին նա ընդունվել և ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանի ռեժիսուրայի բաժինը, իսկ, երբ սկսվել է Արցախյան գոյամարտը նա շատ ու շատ սփյուռքահայ հայրենասերների նման 1990 թվականին եկել է Հայաստան և ընդգրկվել Լեռնիդ Ազգալոյանի ազատագրական բանակի կազմում: Աշակերտները հանգամանորեն ներկայացրին Արցախյան Գոյամարտում նրա անցած հերոսական պայքարը՝ մանրամասնեցին, թե ինչպես է պաշտպանել Քարվաճառի տարածաշրջանում գերության մեջ մնացած աղբյուրների կանանց ու երեխաներին:

Պատմեցին նաև համաշխարհային ճանաչում ստացած հայտնի լուսանկարի մասին, որը աղբյուրներից ներկայացրել էին իրականությունը խեղաթյուրված, իբր թե աղբյուրների անվերջ իր շնորհակալությունն ու երախտիքն է հայտնում ազերի զինվորին իրենց հայերի ձեռքից ազատելու համար: Սակայն իրականությունը այն էր, որ ազերի զինվորները նահանջելով գյուղում մնացած ծերերի և երեխաներին տանելու համար խոստացել էին վերադառնալ և չէին վերադարձել նրանք էլ փողոցում նստած սպասելիս են եղել:

Շարունակությունը էջ 6

Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը բացման իր խոսքում նշեց՝ դպրոցի աշակերտները միշտ աչքի են ընկել իրենց բարձր առաջադիմությամբ, մասնակցելով տարբեր մրցույթների և օլիմպիադաների արժանացել են պարգևների և նվերների: Աշակերտների առաջադիմությունը և ոգևորությունը էլ ավելի բարձրացավ հատկապես վերջին 1,5 տարում, երբ դպրոցում վերանորոգվեցին մի քանի դասասենյակներ, իսկ դասերը սկսեցին անցկացվել նորոգված, լուսավոր, մաքուր ու ջերմ հայոց լեզվի և գրականության (Կանադա), Հրանտ Ինճի անվան պատմության (Կանադա), զինվորական պատրաստության (Ֆրանսիա), Մարգիս Հացպանյանի (Ֆրանսիա) անվան հայրենասիրական դասարաններում:

Անահիտ Քոսակյանը ընդգծեց, որ դպրոցի տնօրինությունը և ուսուցչական ողջ կոլեկտիվը որոշել են միաձայն հայրենասիրական դասարանը կոչել Մարգիս Հացպանյանի անունով՝ հաշվի առնելով նրա ծառայությունը հայրենիքին, մասնակցությունը Արցախյան գոյամարտին:

Այնուհետև դպրոցի տնօրենը շնորհակալագիր հանձնեց Արշակ Չոպանյան ինստիտուտի տնօրեն Վարուժան Միրապյանին: Վերջինը

## ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԹԹԻՀԱՏԻ ՀԵՏ

ԳՐԵՑ՝ ՍՏԵՓԱՆ ՍՍՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Մի կողմից՝ «Բաժանեա՛ զի տիրեսցես»-ի քաղաքականությամբ հայ կուսակցություններին իրարից հեռու պահել, միւս կողմից հայ տարրեր որսալով՝ իր դիրքը ուժեղացնել, -սա՛ էր Իթթիհատի հոգին:

Ի՛նչ է որ ասուի, ի՛նչ պատճառաբանություն էլ որ բերուի, դրանք անզոր են՝ գործուած է՛ն մեծ սխալը մեղմելու: Պատմական ամենամեծ սխալը, որ Հ. Յ. Դաշնակցությունը գործեց, այն պայմանագրությունն էր, որ Ատանայի կոտորածին անմիջապէս յետոյ ան կնքեց Իթթիհատի հետ, անոր հետ համաձայնելով, անոր համագործակցութիւն տալով: Այդպիսով Իթթիհատը հայերու մէջ ոչ միայն մշտական նեցուկ մը ունեցաւ, այլ՝ ծանրացաւ հայութեան վրայ, եւ իր ուղղակի ընել չկրցածը՝ Դաշնակցութեան ձեռքով, անոր միջոցով ըրաւ: Դաշնակցականները ընդունեցին օսմանականութեան (օսմանը, օթթմանիզմ) գաղափարը եւ անոր ջերմ փրփականտիսթը դարձան: Մա ուղղակի իթթիհատականութիւնն էր՝ հայ ազգային գաղափարին դէմ ուղղուած:

Հայ պատրիարքական առանձնաշնորհումները՝ որ ազգային տարրական իրաւունքներ էին, անխնայ հեզմուեցան, հարուածուեցան, չճանչուեցան Իթթիհատին կողմէ՝ դաշնակցականներու ձեռքով:

Հայ ազգային ժողովի ստորագելիները ոտնակոխուեցան Դաշնակցութեան կողմէ, բայց աստիկա իթթիհատական պետական թեզն էր, որ կիրարկութեան կը դրուէր: Իթթիհատը ջանաց մի՛այն դաշնակցականները ճանչնալ հայ ազգի ներկայացուցիչը, եւ Դաշնակցութիւնն ալ ուզեց այցալէ ս ըլլալ, ա յո ոգիով եւ ուղղութեամբ գործել: Բայց անիկա է՛ն մաքիավելլական թրքութիւնն էր, որ յառաջ կը քշուէր՝ հայ ազգը քայքայելու, անդամալուծելու համար: Կուսակցութիւնը Ազգի, մասը՝ ամբողջի տեղ ընդունելով: Իրաւ է, որ ասով Դաշնակցութիւնը փոքրիկ առաւելութիւն ձեռք կը բերէր, օրինակի համար՝ 5-6 երեսփոխաններ կու տար, իր ընկերներուն համար, դիւրութեամբ, պետական զանազան շահաւէր պաշտօններ ձեռք կը ձգէր, բայց չարաչար տուժողը կ ըլլար Հայ Ազգը, հայ ազգային հաստատութիւնները, ինչ որ Իթթիհատի ցանկութիւնն էր եւ անոր ծրագրային գործունէութեան մէկ մասը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը համաձայնութիւն կը գոյացնէր, ըստ երեւոյթին, որպէսզի «Սահմանադրութիւն»ը պահպանուէր: Բայց նոյնիսկ այդ համաձայնութեամբ, Իթթիհատը ոյժ կը ստանար «Սահմանադրութիւն»ը խեղանդամելու, «իթթիհատականացնելու», քանի որ հարուածող ձեռք մը կը պակսէր, եւ կուսակցական շահերու տեսակետով՝ ստիպուած էր լռել, չխօսիլ, անոր կողմը բռնել:

Ո՛վ էր հայ ազգի գոյութեան սպառնացողը - Իթթիհատը: Եւ սակայն, Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ միայն Հայ Ազգի գլխուն շարունակական սպառնալիք եղող, թուրք ազգայնականութեան կատաղի եւ անհամբերատար ներկայացուցիչ Իթթիհատի գոյութեան չէր սպառնար, այլ այդ կողմէ անոր համագործակցութեան սպահովութիւն կու տար, ինչ որ աղիտալի, մեծ սխալ էր: Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործած այս սխալով մեծապէս նպաստեց, զօրավիզ հանդիսացաւ Իթթիհատի ուժեղնալուն, ամրապնդուելուն, իրեն այսօրուան դիրքին հասնելուն, որ կործանարար եղաւ վերջը՝ իր (Դաշնակցութեան) համար ալ: Գայլի ուժեղացման մէջ Դաշնակցութիւնը շատ մեծ պատասխանատուութիւն ունի, սա անուրանալի փաստ է, եւ ոչ մէկ պատճառաբանութեամբ չի՛ կրնար արդարանալ:

«Պատասխանատուները» Բ տպագրութիւն, Պէրոյթ 1974 էջ 118-119



### «Մեր Զինձառայողները Կը Գիտակցին Իրենց Առաքելութեան». Տիգրան Արքայազան

Սահմանագիծին վրայ հակառակորդի տեղաշարժերուն, աշխուժացման, Հայաստանի մէջ ներքաղաքական իրավիճակին պաշտպանութեան բանակին վրայ ունեցած հնարաւոր ազդեցութեան հարցերուն մասին «Փանորամա» խօսեցաւ Արցախի նախագահի խորհրդական Տիգրան Արքայազանի հետ:



**«ՓԱՆՈՐԱՄԱ»**.- Սահմանի վրայ հակառակորդին կողմէ կուտակումները կը շարունակուի ն:

**ՏԻԳՐԱՆ ԱՐԿԱՅԱԶԱՆ**.- Հակառակորդին տարբեր ուղղութիւններով շարժերն ու կուտակումները կը շարունակուին: ՊԲ-ը կը հետեւի անոնց եւ ըստ անհրաժեշտութեան գործուն քայլերու կը ձեռնարկէ:

**«ՓԱՆՈՐԱՄԱ»**.- Կուտակումներուն զուգահեռ ատրպէյճանական կողմէ աշխուժացում՝ յարձակման, հետախուզական խումբերու ներթափանցման կամ այլ փորձեր եղած են:

**ՏԻԳՐԱՆ ԱՐԿԱՅԱԶԱՆ**.- Վերջին տարիներուն, առաջնագիծին վրայ իրականացած գիտարուեստական վերազինման իբրեւ արդիւնք՝ հակառակորդին կողմէ յարձակման գործողութիւններ իրականացնելու վտանգները կտրուկ կերպով նուազած են: Հակառակորդը առաջնագիծին վրայ աշխուժութիւն կը մտցնէ դիպուկահար խումբերու, ծանր գնդացիներու, ինչպէս նաեւ առաջնագիծին վրայ կտրուկ տեղաշարժներու միջոցով:

**«ՓԱՆՈՐԱՄԱ»**.- Հայաստանի մէջ ստեղծուած ներքաղաքական իրավիճակը որեւէ ազդեցութիւն կը ձգէ ՊԲ մարտունակութեան վրայ:

**ՏԻԳՐԱՆ ԱՐԿԱՅԱԶԱՆ**.- Պաշտպանութեան բանակը իր ամենօրեայ ծառայութեամբ անընդհատ կը ձգտի բարձրացնել իր մարտունակութիւնը: Տրամաբանօրէն հայաստանեան ներքաղաքական զարգացումները չեն կրնար ազդեցութիւն չունենալ առաջնագիծին վրայ տիրող իրավիճակին, մասնաւորապէս հակառակորդի վարքագիծին վրայ: Սակայն պետք է ընդգծել, որ պաշտպանութեան բանակն ու անոր զինձառայողները չափազանց լրջօրէն կը գիտակցին իրենց առաքելութեան եւ պատիւով կը կատարեն իրենց վրայ դրուած մարտական խնդիրը: Մեր զինուորը իր տեղն է, լաւագոյնս կը տիրապետէ Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումներուն եւ պատրաստ է որեւէ իրավիճակի մէջ զսպելու, հակազդելու Ատրպէյճանի որեւէ քայլ, որ վտանգ կը ներկայացնէ մեր անվտանգութեան:

Շարունակուած էջ 1-էն

### ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ...

դ) Մինչ այդ ԱԺ նախագահութեանը առաջարկել ձեռնարկել ընտրութիւններին մասին ՀՀ օրենքի բարեփոխման գործընթաց այն համապատասխանեցնելով իսկական ժողովրդավարական չափանիշներին՝ բացառապէս համամասնական կարգով ընտրելիություն, ելակետային հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների համար, Կենտրոնական ընտրական նոր հանձնաժողովի ստեղծում՝ ապակուսակցական սկզբունքով, ամենախիստ վերահսկողություն սահմանել ընտրություններում ծախսվող գումարների վրա:

ե) Օրենսգրքորէն ապահովել Հանրապետության նախագահի իրավասությունների ընդլայնումը՝ երկրի ղեկավարման հիմքում դնելով իշխանության տարբեր թեւերի միջեւ հակակշռման սկզբունքը, նվազեցնելով վարչապետի գերիշխող իրազրույթությունները:

ՌԱԿ-ը համոզված է, որ այս եւ հետագա օրինական քայլերի կիրառմամբ միայն հնարավոր կլինի ժողովրդի իշխանությունը տարածել մեր ողջ երկրի վրա, ապահովել պետության կայուն եւ ապահով զարգացումը բոլոր բնագավառներում:

### ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յակոբ Ավետիքեան  
Ատենապետ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վարդան Նազիրեան  
Ատենապետ

### Էրտողան. «Սկիզբէն Լեռնային Ղարաբաղի Հարցը Նկատած Ենք Մերը»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան իր ազրպէյճանցի գործընկեր Բլիամ Ալիեւի հետ Անգարայի մէջ տեղի ունեցած հանդիպումէն ետք յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղի տագնապի հարցին մէջ Թուրքիան պիտի շարունակէ աջակցիլ Ազրպէյճանին:

Թրքական «Տէյի Սապահ» օրաթերթը կը նշէ, թէ Էրտողան իր խօսքին մէջ ընդգծած է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կը նկատուի սեփական հարց:

«Սկիզբէն մենք Լեռնային Ղարաբաղի հարցը նկատած ենք մերը», ըսած է Էրտողան:

Թրքական «Հիւրիէթ» օրաթերթը կ'աւելցնէ, որ Էրտողան իր խօսքին մէջ անդրադարձած է նաեւ Ազրպէյճանի հետ տնտեսական յարաբերութիւններուն՝ յայտարարելով, որ Թուրքիան պիտի դառնայ Ազրպէյճանի մէջ ներդրումներ կատարող գլխաւոր երկիրը:

Շարունակուած էջ 1-էն

### Հիասթափեցնող մտորումներ

Ձեռնարկը կազմակերպված էր բարձր մակարդակով, հրավիրված էին հունական կառավարության, ազգային ժողովի և դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ վկայելու Հայոց Ցեղասպանությունը և դատապարտելու 103 տարի առաջ տեղի ունեցած ոճիրը:

Այս ամենը սակայն առ ոչինչ դարձավ, երբ օտար հասարակության առջև ոմանք ի ցույց դրեցին իրենց փոքրիկությունը՝ ձեռնարկի ներկաներին ողջունելիս անտեսելով Ամենայն Հայոց Կաթողիկոսապատկան Հունահայոց Թեմի Առաջնորդական տեղապահին: Ձեռնարկը վարող ՀՅԴ կուսակցության երդվյալ երիտասարդի կողմից չհիշատակվելը դեռ ինքս ինձ չէի հասցրել բացատրել, երբ բեմ բարձրացան մեկը մյուսին հաջորդող հույն բանախոսներ և նախապէս իրենց տրված ողջույնի թերթիկը հազիվ արտաբերելով կրկնեցին օրվա հայ կուսակցականի նախաբանները: Թող չթվա թե անձս է վիրավորված չհիշատակվելու պատճառով և կամ ԵՍԵ է վիրավորված պաշտոնս չհիշատակելու առիթով: Խնդին այլ է և կարծում եմ հայկանալի է ամենքիս այս տեսակ դրսևորումների պատճառով օտարը որքան է մեզ տիրել բաժանելով: Այսօր, երբ այս ամենից դասեր պետք է առած լինեինք առավել քան երբևէ մի կողմ պետք է դնեինք բոլոր տեսակի տարաձայնությունները գոնե օտարներին մեր միասնական ուժը ցույց տալու համար, որպէսզի մեզ հետ հաշիվի նստեն:

Ո՛վ, ի՞նչ շահեց չհիշատակելով ինձ, հայ կաթողիկէ համայնքի առաջնորդին կամ հայ ավետարանական եկեղեցու հովիւին: Արդյո՞ք օտարները չտեսան, որ Անթիլիասի միաբան Գեղամ արք. Խաչերեանի կողքին կանգնած էր մեկ այլ առաջնորդական գավազանակիր վարդապետ, որին հույն պաշտոնյաներն անձամբ են ճանաչում և իրենց պաշտոնական գրություններում դիմում հավուր պատշաճի՝ իբրև Հունահայոց թեմի առաջնորդական տեղապահ: Երբեք մտքովս չէր անցնի, որ աշխարհում կարող է գտնվել մի հայ, ով չհպարտանա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով: Ամենայն հարգանք և խոնարհում մեր Սուրբ եկեղեցու բոլոր նվիրապետական աթոռներին, ինչու՞ ուրիշ Էջմիածին կամ ուրիշ Հայաստան ունէ՞ք հպարտանալու:

Չէ որ ժամեր անց պետք է այդ նույն անմիասնականություն սերմանողները առաջնորդէին Աթենքի հայերին բողոքի երթի՝ դեպի թուրքական դեսպանատուն, ճանապարհին բացականչելով. ՄԻՌՈՒԹՅՈՒՆ, ՊԱՅՔԱՐ, ՀԱՂԹԱՆԱԿ: Հետաքրքիր է ինչպէս է այսպիսի մեկը հանգիստ գլուխը դնում բարձին, երբ ինքը ճյուղին նստած կտրել է նույն ճյուղը:

Ի վերջո մեզ դեռ քանի քանի ձախողումներ են պետք հասկանալու համար բանաստեղծի խոսքերը՝ Ո՛վ հայ ժողովուրդը քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է:

Խորեն Վրդ. Առաքելյան  
Առաջնորդական տեղապահ Հունահայոց թեմի



### Նիկոլ Փաշինյանը հայտարարեց անհնազանդության ակցիաները դադարեցնելու մասին

Ազգային ժողովի «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը հայտարարեց մայիսի 3-ին վարչապետի պաշտոնում իր թեկնածությունն առաջադրելու և հանրապետության ողջ տարածքում խաղաղ անհնազանդության ակցիաները դադարեցնելու մասին:



Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը Փաշինյանը հայտարարեց, որ «Ծառուկյան» դաշինքի, «Դաշնակցության» և «Ելք» դաշինքի պատգամավորներն իրենց ստորագրությունը կդնեն, որպեսզի ինքն առաջադրվի վարչապետի թեկնածու: «ՀՀԿ-ն այսօր խմբակցության նիստ է անցկացնել, որի արդյունքներով հայտարարել են, որ առաջիկա ընտրություններին սատարելու է ժողովրդի թեկնածուին:

Այսինքն, եթե հաշվի առնենք այսօրվա քաղաքական հայտարարությունները, վարչապետի ընտրությունների երկրորդ փուլում մեր թեկնածուի ընտրության խնդիրը գործնականում լուծված է:

Դրա համար մենք պետք է անենք կոնկրետ գործողություններ: Վաղը մենք ոչ Երևանում, ոչ մարզերում ոչ մի ակցիա չենք իրականացնում և դուք հանգստանում եք», - «Արմենպրես»-ի փոխանցմամբ նշեց Նիկոլ Փաշինյանը:

Նա հավաքվածներին կոչ արեց օրվա ընթացքում հետևել իր ֆեյսբուքյան էջին, որի միջոցով ինքը հանրությանը կտեղեկացնի զարգացումների մասին շեշտելով, որ բոլոր դեպքերում զգոնությունը չպետք է կորցնեն:

Նիկոլ Փաշինյանը բոլորին կոչ արեց վարչապետի ընտրության օրը մայիսի 8-ին կրկին հավաքվել:

### ՀՀԿ-ն Թեկնածու Չ'առաջադրեր

#### Յայտարարություն

ԱԺ Հանրապետական խմբակցությունը պիտի քուեարկե օգտին այն թեկնածուի, գորկ'առաջադրեն միւս քաղաքական ուժերը, Հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն խմբակցության նիստին ետք յայտարարեց խմբակցության ղեկավար Վահրամ Պաղդասարեանը:



«Հաշուի առնելով երկրի մեջ ստեղծուած իրավիճակը՝ ՀՀԿ խմբակցության անունով կը յայտարարեմ, որ Հայաստանը Մայիս 8-ին պիտի ունենայ սահմանադրական ճանապարհով ընտրուած վարչապետ, ՀՀԿ-ն թեկնածու չ'առաջադրեր եւ պիտի սատարէ 1/3-ի կողմէն առաջադրուած թեկնածուին», - ըսաւ ան:

Պաղդասարեանը կոչ ըրաւ դադարեցնել շրջափակումները, բողոքի գործողութիւնները եւ վերադառնալ սահմանադրական ճանապարհներով հարցեր լուծելու դաշտ:

Յիշեցնենք՝ համաձայն «ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական օրէնքի 140-րդ յօդուածի 3-րդ մասի՝ վարչապետի ընտրութեան հարցը կը քննարկուի Մայիս 8-ին՝ ժամը 12:00-ին:

### ՀՀ Նախագահը Նոր Յայտարարութիւն Տարածած է

ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան յայտարարութիւն տարածած է՝ կապուած ներքաղաքական իրադարձութիւններուն հետ:



Յայտարարութիւնը կը ներկայացնենք ստորեւ.

«Միբելի հայրենակիցներ, Ազգային ժողովը չկրցաւ ընտրել երկրի վարչապետ:

Խորապէս կը ցախիմ, որ քաղաքական ճգնաժամը կը շարունակուի, հակառակ անոր, որ բոլորն ալ կը յայտարարեն երկրի ապագայի համար ստոր վտանգին մասին: Մեր բոլորին ուշադրութիւնը սեւեռուած է ներգրաւուած քաղաքական ուժերու գործողութիւններուն վրայ:

“Կոչ կ'ընեմ յառաջիկայ շաբաթուան ընթացքին շարունակելու խորհրդակցութիւնները ճգնաժամէն ելք գտնելու ուղղութեամբ, որ պիտի ծառայէ մեր ընդհանուր ազգային շահերուն»:

### Էդուարդ Մարքէլ Հայոց Գեղասպանութեան Ճանաչումը Բարոյական պարտք կը համարէ

ԱՄՆ ծերակուտական Էդուարդ Մարքէլ յայտարարութիւն տարածած է Հայոց ցեղասպանութեան 103-րդ տարելիցի առնչութեամբ խոստանալով չդադարեցնել պայքարը Օտերակոյտի մէջ, քանի դեռ Հայոց ցեղասպանութիւնը ամբողջութեամբ եւ պատշաճ կերպով չ'է ճանչցուած:



«Ամէն տարի այս օրը մենք կը յարգենք 1.5 միլիոն հայերու յիշատակը, ովքեր դաժանաբար սպանուած են Հայոց ցեղասպանութեան ժամանակ: Մեր բարոյական պարտականութիւնն է ամբողջապէս ու պատշաճ կերպով ճանչնալ ցեղասպանութիւնը, քանի որ չափազանց երկար ժամանակ ապրած ենք այդ պարտականութեամբ: Հոռմի պապը իրաւացիօրէն Հայոց ցեղասպանութիւնը անուանած է «20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն» արդարացիօրէն յայտարարելով, որ մեր պարտքն է յարգել անոնց յիշատակը, ովքեր մահացան: Ես չեմ դադարի պայքարիլ ԱՄՆ Օտերակոյտի մէջ մինչեւ մենք ամբողջութեամբ չ'իրագործենք այդ պարտականութիւնը, որպէսզի մէկընդմիշտ յստակ եւ միանշանակ եզրայանգում կատարուի, որ մեր ազգը հանդուրժողականութեան եւ ազատութեան օրինակ է ամբողջ աշխարհի մէջ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

### 1915-ին Հայ եւ Ասորի Ժողովուրդները Այստեղ Մեծ Աւեր Տեսան.

#### Կարօ Փայլան Այցելած է Պատմական Սուր Շրջան

Թուրքիոյ քրտամետ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան այցելած է այժմեան Թուրքիոյ տարածքին մէջ գտնուող հայկական Տիգրանակերտ (Տիարպէքի) նահանգի Սուր շրջան, ուր քիւրտ-թրքական բախումներու հետեւանքով աւերածութիւններ եղած են:

Փայլանի թուիթթրեան էջէն կը տեղեկանանք, որ ան կոչ ըրած է միասնաբար ձեռնամուխ ըլլալու Սուրի վերականգնման եւ նշած, որ այդ աւերումը դաւաճանութիւն է մարդկութեան ու համաշխարհային քաղաքակրթութեան դէմ:

«Սուրը 100 տարի առաջ ալ նման աւեր տեսած է: 1915-ին հայ ժողովուրդը, ասորի ժողովուրդն այստեղ մեծ աւեր տեսան ու բռնի գաղթեցին, իսկ հիմա՝ մէկ դար անց, նոյն վայրի մէջ նոր աւեր կ'իրականացուի», - ըսած է ան՝ նշելով, որ պետք է վայրկեան առաջ Սուրը կրկին ոտքի կանգնեցնել:

Նշենք, որ քիւրտերու դէմ իրականացուած գործողութիւններէն ետք Սուրի մէջ պետականացուած գոյքի ցուցակին մէջ յայտնուած էր նաեւ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին, որ նոյնպէս հսկայական վնասներ կրած է:



# Յիշէ...Յարգէ...Պայքարէ...Պահանջէ

Յարգելի Հայրենակից

Հայ ազգի ոչնչացման՝ ճգնաժամային ցեղասպանութենէն եւ տաժանակիր տառապանքի թշուառութիւններէն, 103 տարիներ անցած են:  
Վերքը կը մնայ անունջ եւ անմոռանալի:

Հայոց ցեղասպանութենէն ետք, երեք տարիներու իրարյաջորդ քաղաքական տխուր եղելութիւններուն, կը յաջորդէ Սարտարապատի դիւցազնամարտի յաղթանակը, որուն շնորհիւ կը կերտուի Ազատ Անկախ Հայաստանի առաջին պետականութեան հռչակումը, որմէ արդէն անցած են հարիւր տարիներ:

Յունաստանի Ռ.Ա.Կուսակցութեան՝ Հայ Իրաւանց Խորհուրդը՝ կը նախաձեռնէ, հովանաւորութեամբ Յունահայոց Թեմական Խորհուրդին, Կիրակի 3 Յունիս 2018-ի առաւօտեան ժամը 10.30ին,

Աթէնքի «GLORIA» թատրոնին մէջ ΠΡΟΚΡΑΤΟΥΣ 7 και ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΥ

-Ոգեկոչել՝ 24 Ապրիլ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը

-Փառաբանել՝ 22-26 Մայիս 1918 Սարտարապատի յաղթանակը կերտող հերոսներու յիշատակի եւ

-Յիշատակել՝ 28 Մայիս 1918ի, Հայաստանի ազատ անկախ հռչակման՝ առաջին հանրապետութեան 100 ամեակը:

Օրուան խորհուրդը յարգելի ներկաներուն կը հաղորդէ յունարէն լեզուով, Յոյն հանրաձանօթ քաղաքագէտ, Յունաստանի նախկին արդարութեան նախարար եւ ներքին գործոց նախարար՝

## ΧΑΡΑΛΑΜΠΟΣ ΚΑΣΤΑΝΙΔΗΣ

Որ իր հռետորական ոգեւորիչ շունչով՝ միշտ ներշնչած է իր ունկնդիրները:

**Ուխտի Օր է՝ Մասնակցէ՝ Յիշէ՝ Յարգէ՝ Պայքարէ՝ Պահանջէ**



Շարունակումս էջ 3-էն

### Եվս մեկ հայրենասիրական քայլ...

Գյուղի ազատագրական մարտերին մասնակից Սարգիս Հացպանյանը փողոցում պատահաբար հանդիպում է թուրք տարեց կնոջը, ով ենթադրում է, որ իրեն մոտեցողը ազերի զինվոր է, սկսում է հանդիմանել, որ իրենց լքել են և շուտով հայերը կգան և իրենք չեն հասցնի հեռանալ: Սարգիս Հացպանյանը, հասկանալով, որ տատիկը իրեն ազերի զինվորի տեղն է դրել, սկսում է նրան բացատրել, որ իրենք հայ զինվորներ են, և հիմա կկազմակերպեն նրանց անվտանգ տեղափոխումը: Տարեց կինը այնքան է շփոթվում և հուզվում, որ գրկելով Սարգիսին համբոյրում է. և ասում իրենց զինվորները լքեցին գյուղի բնակիչներին, իսկ հայ զինվորը կազմակերպում է իրենց անվտանգ տեղափոխումը:

Աշակերտների ելույթից հետո խոսեց Արցախի հանրապետության կրթության գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: <Այս փոքրիկ միջոցառումը մեծ խորհուրդ ունի: Մեր երկրի

իշխանությունները պատերազմից հետո առաջին հերթին դպրոցաշինության ծրագիր են իրականացրել՝ կարևորելով կրթության բնագավառը երկրի կայացման գործում: Այս տարիների ընթացքում մի քանի տասնյակ դպրոցներ, այդ թվում նաև Քաշաթաղի շրջանում, կառուցվել են, հիմնանորոգվել, և գործընթացը շարունակվում է: Այս կարևոր գործում մեծ է Սփյուռքի մեր հայրենակիցների դերը: Մա խոսում է հայության միասնության մասին>,- ասաց Նարինե Աղաբալյանը: Վերջինը շնորհակալություն հայտնելով բարերարներին և միջոցառումը կազմակերպչներին՝ ակնածանքով նկատեց, որ այսօրվա երիտասարդությունը բանիմաց ու գիտակ է: Նախարարը հավելեց նաև նախարարությունը հետամուտ կլինի, որպեսզի հնարավորինս շուտ լուծվեն առկա խնդիրները, և ապահովվի լավագույն կրթություն, քանզի այսօրվա աշակերտներն են մեր ապագան և երկրի վաղվա տերը:

Այնուհետև ներկաները բարերաների հետ քննարկեցին հետագա անելիքները :

Գայանե Սուրադյան - Երևան -Բերձոր-Ստեփանակերտ-Երևան



**Հ.Բ.Ը.Մ.-ի «Ա. Գալփաքեան» Վարժարանի աշակերտներու մասնակցութիւն «Արի Տուն» ծրագրին**



Յարգելի Հայրենակիցներ,

Հ.Բ.Ը.Մ.-ի «Ա. Գալփաքեան» Վարժարանը կը կազմակերպէ այցելութիւն մը դէպի Հայաստան, Հ.Հ. Մփիւղքի Նախարարութեան՝ սփիւղքի պատանիներու հայրենաճանաչութեան «Արի Տուն» ծրագրին միջոցաւ:

«Արի Տուն» ծրագրի նպատակն է՝ կապ ստեղծել աշխարհասփիւռ հայ պատանիներուն եւ հայրենիքի միջեւ, որպէսզի հայրենիքէն հեռու ապրող պատանիները մտնեն ծանօթանան իրենց երազած հայրենիքը, վայելեն անոր չքնաղ բնութիւնը եւ հայկական ոգիով թրծուին:

Ծրագրին տեւողութիւնը պիտի ըլլայ 8 Յուլիս 2018-էն, մինչեւ 21 Յուլիս 2018-ը, ուր կրնան մասնակցիլ 13-18 տարեկան պատանիներ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար՝ փափաքողները կրնան դիմել մինչեւ Մայիս 15, 2018-ը, հետեւեալ հեռաձայնի թիւերուն.- 2109816679 եւ 2109825685:

Տնօրէնութիւն

**Համբարձման Տօն**

Սիրելի յունահայոց թեմի հաւատացեալներ, այսու հրաւիրում ենք ամենքիդ մայիս 16-ին ժամը 19:00-ին Փերիսթերիի Սուրբ Աստուածածին եկեղեցի, միասին տօնախմբելու համբարձման տօնը:

Նոյն օրը տեղի կ'ունենայ 2 երիտասարդների մկրտութիւն: Յաւարտ արարողութեանց երիտասարդաց միութեան կողմից կը լինի հիւրասիրութիւն, երգ և պար:

Με μεγάλη μας χαρά, σας προσκαλούμε στην βραδιά της επέτειου της κορυφαίας ομάδας "ΑΒΕΤΙΣ" που αιώνας κλείνει φέτος τα 5 χρόνια. Η βραδιά έχει τον τίτλο ΠΑΤΡΙΔΑ, ΕΙΜΑΣΤΕ ΓΕΝΝΗΜΕΝΟΙ ΑΠΟ ΤΗΝ ΑΓΑΠΗ ΣΟΥ και είναι αφιερωμένη στις ηρωικές μάχες του Μαΐου της Αρμενίας. **Λεόντειος Σχορή Νέας Σμύρνης - Θεμιστοκλή Σοφούλη 2**

Միտով հրավիրում ենք «ԱՎԵՏԻՍ» պարխմբի հորեյանական երեկոյին՝ մեր արդէն 5 տարեկան ենք: Երեկոն ելիւրում է Հայաստանի Մայիսյան հերոսամարտերին՝ ՔՈ ՍԻՐՈՒՅ ԵՆՔ ԵՆՎԵԼ, ՀԱՅՐԵՆԻՔ խորագրով:

Σάββατο 26 Μαΐου 2018 - 7.30 μμ. 6150ΔΟΣ ΕΛΕΥΘΕΡΗ - ΔΙΑΤΘΕΤΑΙ ΠΑΡΚΙΝΓ

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Տէր եւ Տիկ. Կիրակոս Պերպերեան եւ զաւակները, Տիկ. Լուսի Պերպերեան եւ զաւակը եւ համայն ազգականները, կը ծանուցանեն թէ Կիրակի 20 Մայիս 2018, Փերիսթերիի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին:

**ՔՐԻՍՏԻՆԷ ՊԷՐՊԵՐԵԱՆԻ**

մահուան քառասունքին առթիւ:

**Ամավերջի Հանդէս**

**Հայ Աւետարանական Մանկապարտէզի**

Միտով կը հրաւիրենք Ձեզ, Հայ Աւետարանական Մանկապարտէզի Ամավերջի հանդէսին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 6 Յունիս 2018, կ.է. ժամը 7-ին Հայ Աւետ. Եկեղեցոյ ժողովարանին մէջ:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

**ՊՏՈՅՏ**

Հունահայոց թեմի երիտասարդաց միությունը կը կազմակերպէ 10/06/2018 կիրակի մեկ օրյա պտույտ դէպի Սուրբ Թեոդորա (Αγία Θεοδώρα): Առավոտյան 7.30 Կոնստիննուպոլ Պանդոկ և 7.45 Մետրո Եզալեո: Տեղ ապահովելու զանգահարեք Արմինէ 6937678062, Պետրոս 6987675444 :

**ՊՏՈՅՏ ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**



Արարատ Մ.Ս.Միութեան Տիկնանց Մարմինը Մայրերու տօնի առթիւ միօրեայ պտույտ կը կազմակերպէ 13 Մայիս 2018-ին դէպի 'Καταράκτες του Δρυμόνα':

Տեղեր ապահովելու եւ յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք հեռաձայնել հետեւեալ թիւերուն:-

Տիկ. Սօնիա Քաջիկեան հեռ. թիւ 6945333401, Տիկ. Զարուհի Միմոնեան հեռ. թիւ 6977126266:

**Հայ Ճիւտոյիստ յաղթելով ատրպէճանցիին դարձաւ Եւրոպայի ախոյեան**



Մեծահասակներու հաւաքականի անդամ, 73 քկ քաշային Ֆ եր տ ի ն ա ն դ Կ ա ր ա պ ե տ ե ա ն ը , Բարայելի Թէլ Աւի քաղաքի մէջ կայացած Ե ի ր ո պ ա յ ի ա ն ա ջ ն ո թ ե ա ն ե զ ր ա փ ա կ ի չ գօտեմարտին, յաղթելով ա տ ր պ է յ ճ ա ն ց ի ձիւտոյիստ Հիտայթ Հէյտարովը, դարձաւ Ճիւտոյի 2018 թուականի Եւրոպայի ախոյեան: Ան կրկնեց հաւաքականի գլխաւոր մարզիչ Արմէն Նազարեանի ցուցանիշը 13 տարի անց՝ բարձր պահելով մեր երկրի պատիւը: այս մասին կը յայտնէ sportarmenia.ru:

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն ԱՐԱՐԱՏ Մ Ս ՄԻՈՒԹԻՒՆ Միւրթու 33, Նիքեա, Յունաստան

Համակարգչային շարուածքը եւ էջադրումը՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի

Տնօրէն՝ Ընկ. Սարգիս Խաչատուրեան

Արտօնատէր - Փաստաբան՝ ընկ. Յակոբ Տէսճեան

“NOR ASXAP” Արմենիկ Էփօմաճաճաճա Էփօմերիճա Իճոկտէշաճա “APAPAT” Փիլօլօգիկօ Աթլէդիկօ Տօմաթէճո

Ըիւթօնտիշ Տարկիշ Խատսատուրիան Էկճօտիշ - Իաքօբօս Փետշիան Ըիկէղօրօս

Տիշօտօ 33 - TK 18450 - Նիկաճա Դիլ: 210-4926085 “NOR ASHKHAR” Armenian Cultural Social Weekly

33 Sistou Str. GR 18450 NIKEA GREECE Tel-Fax: 00+30+210-4926085



Բացի իմբարականներէն, յօդուածագիրներու տեսակէտներն ու գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտեր թերթին ուղեգիրը:





ΔΗΜΟΣ Π.ΦΑΛΗΡΟΥ  
ΔΗΜΟΤΙΚΕΣ ΒΙΒΛΙΟΘΗΚΕΣ Π.ΦΑΛΗΡΟΥ



Ο Δήμαρχος Π.Φαλήρου Διονύσης Χατζηδάκης, η «ΑΡΑΡΑΤ ΕΛΛΗΝΟΑΡΜΕΝΙΚΗ ΦΙΛΟΛΟΓΙΚΗ ΑΘΛΗΤΙΚΗ ΕΝΩΣΗ» και η Αντιδήμαρχος Περιβάλλοντος και Υπεύθυνη Δημοτικών Βιβλιοθηκών Π.Φαλήρου Βίκυ Ανδρικοπούλου, σας προσκαλούν στην αρμένικη θεατρική παράσταση με τίτλο «Υπηρέτης δύο αφεντάδων» σε σκηνοθεσία Χάικ Κασαρτζιάν (ελληνική απόδοση)



Την Πέμπτη 31 Μαΐου, 2018  
& ώρα 20:00  
Στον ΠΟΛΥΧΩΡΟ του Δημαρχείου Π.Φαλήρου  
(Τερψιχόρης 51 & Αρτέμιδος)



**ΑΝΑΚΟΙΝΩΣΗ  
ΓΙΑ ΤΙΣ ΕΓΓΡΑΦΕΣ  
ΜΑΘΗΤΩΝ**

Αγαπητοί Γονείς,  
Σας ενημερώνουμε ότι οι εγγραφές των μαθητών για τη νέα σχολική χρονιά 2018-2019, αρχίζουν την 1η Ιουνίου 2018 και θα ολοκληρωθούν στις 21 Ιουνίου 2018. Πιο συγκεκριμένα, για τους μαθητές που θα φοιτήσουν στο Νηπιαγωγείο και την Α' τάξη Δημοτικού οι εγγραφές ξεκινούν από την 1η Μαΐου 2018.

- Δικαίωμα εγγραφής έχουν:
1. Στο Νηπιαγωγείο, τα παιδιά που γεννήθηκαν το 2013 (νήπια) και 2014 (προνήπια).
  2. Στην Α' τάξη του Δημοτικού, τα παιδιά που γεννήθηκαν το 2012.
  3. Η εγγραφή στις υπόλοιπες τάξεις γίνεται με το συνηθισμένο τρόπο.
  4. Για τις εγγραφές στο Νηπιαγωγείο και στην Α' τάξη Δημοτικού, χρειάζονται πιστοποιητικά για τα οποία θα ενημερωθείτε από τη Διεύθυνση του Σχολείου.
- Παρακαλούμε για την έγκαιρη τακτοποίηση των εγγραφών των παιδιών σας. Η άμεση ανταπόκριση όλων, βοηθά στην ομαλή λειτουργία του Σχολείου και στην εξασφάλιση των μεταφορικών μέσων.

Στοιχεία επικοινωνίας  
\*Τηλ. Σχολείου: 210- 9816679 (πληροφορίες: Μπεναρδή Μαρία-Ελένη)  
\*Τηλ. Γραμματείας: 210- 9825685

Η Διευθύντρια  
Μαρία-Ελένη Μπεναρδή



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԸՂ  
ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻԻ, ԴԱՓՆԵՊՍԱԿԻ ՋԵՏԵՂՈՒՄ  
Հ. Բ. Ը. Մ.-ԵԱՆ «Ա. ԳԱԼՓԱՔԵԱՆ»  
ՎԱՐՓԱԸԱՆԻ ԿՈՂՄԷ**

Հ. Բ. Ը. Մ.-եան «Ա. Գալփաքեան» վարժարանի աշակերտները եւ ուսուցչական կազմը, Չորեքշաբթի 25 Մայիսի 2018, ներկայ գտնուեցան Նեա Ջմիռնիի Հայոց Յեղասպանութեան «Չանգակ» յուշակոթողին առջեւ, յարգանք մատուցանելու 1,5 միլիոն անմեղ զոհերու յիշատակին:



Յունահայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ՝ Տ. Խորէն Վրդ. Առաքելեանի ներկայութեամբ յիշատակուիլը կատարուեցաւ, ապա իր խօսքը ուղղելով աշակերտներուն բացատրեց անմահ նահատակներուն սրբացումին մասին եւ շեշտեց նաեւ անհրաժեշտութիւնը ոգեկոչելու Հայոց Յեղասպանութիւնը:

Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին, դափնեպսակ զետեղուեցաւ յուշակոթողին առջեւ, ու աշակերտները եւ ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութիւն պահեցին:

Ազգային քայլերգով եւ աղօթքով վերջացաւ Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումը:

